ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄ

Ի պատասխան № **SILD-AFG-06 «Աշտարակ, Արթիկ և Գառնի համայնքների համար տեխօգնության մեքենաների գնում (բաղկացած 2 լոտից)»** մրցույթի վերաբերյալ 31.05.2023թ. Armeps համակարգով ստացված հարցմանը ներկայացնում ենք հետևյալ պարզաբանումը.

Հարց N 1՝

Ավելի հստակ մատակարարման ժամկետ ներկայացնելու համար խնդրում ենք արտադրության տարեթիվը սահմանել 2022-ից ոչ պակաս, նոր, չշահագործված, քանի որ արտադրության պլանային խափանումների հետ կապված 2023թ արտադրության ավտոմեքենաների մատակարարումները դեռևս հստակեցված չեն:

Պատասխան՝

Մատակարարները կարող են մատակարարել 2022թ արտադրության մեքենա, եթե առաջարկվող ապրանքները նոր են և չշահագործված:

Հարց N 2՝

Լոտ 1՝ Գեներատորի և ավտոմեքենայի երաշխիքային սպասարկման պայմանները տարանջատված չեն:

Պատասխան՝

Ամենագնաց կիսաբեռնատար տեխօգնության մեքենայի երաշխիքային սպասարկում՝ 3 տարի կամ 100.000 կմ:

Գեներատորի երաշխիքային սպասարկում՝ 1 տարի:

Հարց N 3՝

Լոտ 2՝ Տվյալ լոտի համար մեր կողմից առաջարկվող ավտոմեքենայի բեռնատարողությունը 1275 կգ: Կարող ենք արդյոք ներկայացնել ավելի բարձր բեռնատարողություն, քան պահանջվում է:

Պատասխան՝

Խնդրում ենք հայտ ներկայացնելիս առաջնորդվել մրցութային փաթեթի պահանջներով:

Հարց N 4՝

Խնդրում ենք հաշվի առնել այն փաստը, որ, ելնելով վերջին տարիներին ավտոարտադրության դեֆիցիտից, ավտոարտադրողների կողմից բնապահպանական չափորոշիչը իջեցվել է Եվրո 5-ից Եվրո 2, ինչի հետ պայմանավորված էլ պահանջվող Եվրո 5 ստանդարտը հնարավոր չի լինի ապահովել

Խնդրում ենք հաշվի առնելով վերոնշվածը փոփոխություններ անել հարցման մեջ:

Պատասխան՝

Խնդրում ենք հայտ ներկայացնելիս առաջնորդվել մրցութային փաթեթի պահանջներով: Նշված մրցույթի շրջանակներում մատակարարված ապրանքները պետք է համապատասխանեն Հայաստանի Հանրապետության կառավարության 2015թ. հունվարի 30-ի N 71-Ն որոշմամբ հիշատակված Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի դեկտեմբերի 9-ի N 877 որոշմամբ հաստատված «Անվավոր տրանսպորտային միջոցների անվտանգության մասին» (ՄՄ ՏԿ 018/2011) Մաքսային միության տեխնիկական կանոնակարգի պահանջներին: Նշված պահանջներին համապասխանության փաստաթղթերը անհրաժեշտ է ներկայացնել Մրցութային հայտով:

Հարգանքով,
Ռոզա Դանիելյան
№ SILD-AFG-06 մրցույթի քարտուղար
Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ
02.06.2023թ.